

74). Եւ երբեմն մինչեւ իսկ «ի սպանութենէ եւ ի զրկանաց» (72): Իսկ երրորդ մը կ'անուանէ զանոնք՝ «իշխանք գողակիցք գողոց, ... ազահք, յափշտակողք» (Խոր. 276): Հայ «վշտացեալ գեղջուկը» (Եղիշ. 55) կը տառապի կը շահի, եւ աւագանին կը շորթէ ու կը վայելէ: Բարեկիրթ մարդոց համար ինչ կայ աւելի նուիրական՝ քան հասարակաց բարեգործական ու կրօնական հաստատութիւնք: Եւ սակայն մեր աւագանւոյն ընչաքաղցութիւնն անոնց դէմ ալ կը զինուի, յանգելով երբեմն մինչեւ յապերասան սրբապղծութիւն եւ սեղանակապտութիւն: Պապ մեծին Ներսեսի հիմնած որբանոցները, հիւանդանոցներն ու կուսաստանները քանդեց կողոպտեց, եւ եկեղեցեաց կալուածները գրաւեց (Փաւս. 228-9, '31): Տեսանք արդէն Հայր մարդպետի մ'աչարձակութիւնն Աշտիշատու հայրապետական ստացուածոց դէմ (աստ, 221): Ու դեռ է դարուն մեր «ազատաց ոմանց» ազահութիւնը կը հարստահարէր կը կեղեքէր վանքերը (Շին. ժԱ), լեցնելու համար իրենց անկուշտ որովայնը: Անոցմէ մին, նոյն իսկ մամիկոնեան ազնիւ արեան աւարժան ժառանգորդ մը, Գլակայ ուխտին կալուածներէն յափշտակեց երկու աւան